ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2023թ. **N ----Ն**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՍՈՒՐԵՆ ՍԱՖԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի հ. 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի Նորք-Մարաշ վարչական շրջանի Նորքի 10-րդ փողոցն անվանակոչել ՀԽՍՀ ժողովրդական նկարիչ Սուրեն Սաֆարյանի անվամբ՝ «Սուրեն Սաֆարյան փողոց»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐ **ՆՈՒԱՐԴ ՎԱՐԴԱՆՅԱՆ**

ԴԻԱՆԱ ՔԵՐՈԲՅԱՆ

ՄԱՐԼԵՆԱ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԵՂԻՆԵ ՈՍԿԱՆՅԱՆ

ԱՆՈՒՇ ՔԼՈՅԱՆ

ԱՆԱՀԻՏ ԱՍԱՏՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՍՈՒՐԵՆ ՍԱՖԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայ նկարիչ Սուրեն Սաֆարյանը ծնվել է 1923թ. օգոստոսի 21-ին, Բաքվում: Նա ՀԽՍՀ վաստակավոր նկարիչ Սարգիս Սաֆարյանի որդին է:

1942 թվականին ավարտել է Երևանի գեղարվեստի ուսումնարանը, 1952 թվականին՝ Երևանի գեղարվեստի ինստիտուտը: 1962 թվականից դասավանդել է ԵԳԹԻ-ում, պրոֆեսոր՝ 1978 թվականից:

1969-1982 թվականներին եղել է Հայաստանի նկարիչների միության նախագահ: Առաջին շրջանի գործերը կրել են Հայրենական պատերազմի մասնակից նկարչի վերհուշ-տպավորությունների կնիքը («Հայրենի մեղեդիներ», 1956): Հյուսիսային Կովկաս, Կուբան, Ուկրաինա, Բելոռուսիա, Լեհաստան, Գերմանիա, ահա Սաֆարյանի անցած ռազմի ճանապարհը, մասնակցել է նաև Պրագայի ազատագրմանը, պարգևատրվել Հայրենական մեծ պատերազմի 1-ին աստիճանի շքանշանով և բազմաթիվ մեդալներով: Պատերազմի թեման արտահայտվել է Սաֆարյանի ստեղծագործական կյանքի տարբեր շրջաններում («Ազատարարները», 1960, «1945 թվականի գարնանը», 1964, նշված երեք աշխատանքի համար պարգևատրվել է Վ. Գրեկովի անվան արծաթե մեդալով, 1971, «Կռունկներ», 1979): 1960-ական թվականների վերջերից ավելի հաճախ է անդրադարձել մարդու և ժամանակի, ընդհանրապես հայ ժողովրդի պատմական ճակատագրի թեմային՝ «Հանուն գալիքի» (1960), «Սայաթ-Նովա» (1963), «Տաթևի ողբերգությունը» (1967), «Լեռների պարը» (1972), «Հինավուրց հուշարձաններ» (1973), «Եռանկյունի նամակներ» (1980):

Սաֆարյանի գործերին բնորոշ են քաղաքացիական շունչը, բանաստեղծական նուրբ ինտոնացիան՝ համակված պլաստիկ ձևերի ու գունաշարի հուզաարտահայտչական տարրերով: Ստեղծել է նաև դիմանկարներ, բնանկարներ, արտասահմանյան ճանապարհորդությունների թեմաներով գեղանկարչական և գրաֆիկական գործեր, կատարել գրքերի ձևավորումներ:

Սուրեն Սաֆարյանը մահացել է 1988թ. ապրիլի 22-ին, Երևանում:

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշման 17-րդ կետը՝ առաջարկվում է Երևան

քաղաքի Նորք-Մարաշ վարչական շրջանի Նորքի 10-րդ փողոցն անվանակոչել ՀԽՍՀ ժողովրդական նկարիչ Սուրեն Սաֆարյանի անվամբ՝ «Սուրեն Սաֆարյան փողոց»:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետով՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐ **ՆՈՒԱՐԴ ՎԱՐԴԱՆՅԱՆ**

ԴԻԱՆԱ ՔԵՐՈԲՅԱՆ

ՄԱՐԼԵՆԱ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԵՂԻՆԵ ՈՍԿԱՆՅԱՆ

ԱՆՈՒՇ ՔԼՈՅԱՆ

ԱՆԱՀԻՏ ԱՍԱՏՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՍՈՒՐԵՆ ՍԱՖԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքում Սուրեն Սաֆարյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՍՈՒՐԵՆ ՍԱՖԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքում Սուրեն Սաֆարյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն սպասվում:

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐ **ՆՈՒԱՐԴ ՎԱՐԴԱՆՅԱՆ**

ԴԻԱՆԱ ՔԵՐՈԲՅԱՆ

ՄԱՐԼԵՆԱ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԵՂԻՆԵ ՈՍԿԱՆՅԱՆ

ԱՆՈՒՇ ՔԼՈՅԱՆ

ԱՆԱՀԻՏ ԱՍԱՏՐՅԱՆ